ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշսֆի 1

№ 2669-Ա « 15 » հուլիսի 2024թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 29.05.2024 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/161 ծածկագրով կենցաղային տեխնիկայի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «Մ. Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ 28.06.2024 թվականին էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով Մասնակցին ներկայացվել էր ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/161-3 ծածկագրով պայմանագիր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու առաջարկ, սակայն հրավերով սահմանված ժամկետում՝ ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 08.07.2024 թվականը ներառյալ, Մասնակցի կողմից համակարգում չի կցվել իր կողմից հաստատված պայմանագիրը և ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Ընթացակարգը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 09.07.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1.«Մ.Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ